ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

ՀՍՍՀ ԴԱ թղթակից անդամ Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայաստանի հին և հռչակված ուխտատեղի վանքերից մեկն է եղել Ծիծեռնավանքը։ Այս բաղիլիկ տաճարը կառուցված է պատմական Սյունիքի Աղահեճ[1] գավառի Աղավնո գետի ափին (այժմ Ադրբեջանական ՍՍՀ Լաչինի շրջանում, Գորիսի շրջանի Խնածախ գյուղից 4—5 կմ դեպի հյուսիս, երկու հանրապետությունների համարյա սահմանին)։

Վանքը գտնվել է հին հայաբնակ գյուղի ծայրին, որը կոչվել է «Ծիծառնավանք»։ Գյուղը երևի եղել է միջակից քիչ մեծ, որովհետև XIII դարում Տաթևի վանքին տվել է տարեկան 10 արծաթ տուրք, իսկ Տաթևին հարկատու 681 գյուղերից ավելի քան 600-ը այն ժամանակ տվել են 6—12 արծաթ[2]։

Ստեփանոս Օրբելյանը Ծիծեռնավանքը հիշում է Սյունիքի մոտ 150 վանքերի մեջ որպես 30 նշանավոր վանքերից մեկը, բայց ոչ իր ժամանակի (XIII դարի վերջ) առաջնակարգ վանքերի շարքում և դասում է 17-րդ տեղը, թեև մինչ Ծիծեռնավանքը նշվում են մի քանի աննշան վանքեր։ Ուշ միջնադարում նույնպես Ծիծեռնավանքը պատկանել է Տաթևի թեմին. «Թէմի եղեալ վանք և անապատք են սոքա. Մեղրոյ սուրբ Յովհաննէս անուն վանքն. Մեծ անապատն արանց. Հարանց անապատն արանց. Շնհերու Աստուածածին անապատրն կուսանաց. Հալիձորու անապատն կուսանաց. Մանկու ամենափրկիչ անապատն կուսանաց. Գանձափարախու վանքն, Կարճևանու սուրբ ուխտն Յովհաննու և Ծիծեռնակու սուրբ վանքն»[4]։ Տաթևի թեմին անմիջապես պատկանող այսքան քիչ վանքերի և անապատների ցանկը կարելի է բացատրել միայն նրանց ուխտատեղի լինելու հանգամանքով, որոնց ստացած եկամուտը, կամ մեծագույն մասը Տաթևին է հատկացվել։ Ուշագրավ է հատկապես կուսանաց անապատների թվարկումը, որոնց թիվը մեծ չի եղել Հայաստանում։

Պատմիչը Ծիծեռնավանքի անունը հիշում է նաև մի այլ առիթով։ 844 թ. Սյունյաց նախարար Փիլիպեն Տաթևի վանքին է նվիրում իր հայրենի Տաթև գյուղը, ամբողջ հող ու անգաստանով։ Պայմանագիրը, իշխաններից և ազատներից հետո, որպես վկաներ, ստորագրում են նաև մեծ ու փոքր կրոնավոր դեմքեր՝ «Ահարոն՝ Երիցու վանական, և Գրիգոր քահանայ, Ստեփաննոս՝ Մաքենոցաց վանական, Յակոբ՝ Ույծայ աւագերէց, Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկո-

---

1 Կոչվել է նաև Քաշաթաղ, Խոժոռաբերդ, բայց տեղի և Գորիսի, Սիսիանի բնակիչները մինչև 1920-ական թթ. կոչում էին Մաղավուզ, Ահաղհեճք—Աղասհեջս անվան աղավաղումով։

2 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 516։

3 Նույն տեղում, էջ 339։

4 Նույն տեղում, էջ 499—500։ Գրքում Տանձափարախը սխալմամբ «Գանձափարախ» է տպված։ Այս ցուցակը, մեր կարծիքով, պատմիչի տեքստում ավելացվել է XVIII—XIX դդ. (ինչպես և վերջին գլուխը՝ «Հավելվածը»), որովհետև Ծիծեռնավանքից բացի այստեղ նշված բոլոր վանքերն ու անապատները հիմնադրվել և կառուցվել են XVII դարում։

պոս, Ստեփաննոս՝ Միծառնոյ վանական, Գրիգոր՝ դրան երեց, Սիմէոն՝ Շաղատոյ վանական, Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ»[5]։

Հիշված Մաքենոց (Գեղամա երկիր), Երիցու (Բաղք-Կապան), Շաղատի և Սյունիի (Ծղուկ-Սիսիան) վանականները IV—VI դդ. գործող նշանավոր մենաստաններից էին։ Սրանց շարքում է և Աղահեճ գավառի Միծեռնավանքը։



Նկ. 1. Միծեռնավանքի տեսքը հարավ-արևելքից։

1655 թ. Թովմա վարդապետ Վանանդեցին Հայաստանի մեծ սրբավայրերին նվիրված իր չափածո ներբողի մեջ հիշատակում է և Միծեռնավանքը։

Անտի ի Վանս մեծ անցեալ
Որ Միծեռն էր կոչեցեալ։

Երբոք, XVII դարում, ինչպես կտեսնենք, վանքը իր ամենափառավոր, բարեկեցիկ վիճակի մեջ է գտնվելիս եղել։

Գրականության մեջ շատ քիչ է հիշվել մեզ զբաղեցնող հուշարձանը, և Թ. Վանանդեցուց հետո, մինչև XIX դարի վերջերը, մինչև Ալիշան և Ե. Լալայան, գոնե մեզ ծանոթ չէ որևէ այլ գրավոր հիշատակություն։ Միծեռնավանքը, որպես մենաստան և վանական նշանավոր հաստատություն, հավասար կամ նման չի եղել Տաթևին, Գանձասարին, Դարաշամբի Մաղարդին, Սանահինին, Հաղպատին, Սևանին, Վարագին, Նարեկին և այլ վանքերի, այլ մնացել է Տեկորի, Երերույքի, Քասաղի, Պտղնիի, Մրենի և նման հռչակավոր տաճարների վիճակում։ Սակայն Միծեռնավանքը վերջիններիս համեմատությամբ ունեցել է այն առավելությունը, որ ժողովրդի համար, քրիստոնեության շրջանի բոլոր դարերում, մինչև XX դար, որպես ուխտավայր պահպանել է հայոց ամենամեծ սրբավայրերից մեկի հռչակը, թերևս զիջելով միայն Մշո Սուրբ Կարապետին և Գեղարդին (Այրիվանքին)։

5 Նույն տեղում, էջ 208։

Մեր այս հայտարարությունը հարկադրում է մի անհրաժեշտ շեղում կատարել և մի քանի խոսք ասել հայոց ուխտավայրերի մասին։ Անցյալում կային ուխտատեղիներ մեկ գյուղի կամ հարևան երկու-երեք գյուղերի համար (դաշտում ավերակ եկեղեցի, մատուռ, խաչքար, գերեզման, քարայր, ծառ և այլն), շրջանի ուխտատեղի (որևէ գյուղի հին եկեղեցի, վանք, մատուռ՝ հաճախ «թուխ մանուկ» կոչվող, դամբարան-գերեզման, լեռների գագաթներ իրենց անշուք, անխաչ փոքրիկ կառույցով և այլն)։ Սրանք, բացի կրոնական նշանակությունից, ունեին զանազան հիվանդություններ բուժելու և կամակատարի՝ «մուրազ կատարելու» ֆունկցիաներ։ Ապա գալիս են գավառային նշանակության ուխտատեղիները, մեծ մասամբ գործող կամ ավերակ վանքերը և այլ ոչ կրոնական վայրերը (ինչպես Սիսիանի Ղարաղիան կամ նույնիսկ «Պորտաքարը»)։ Նահանգային ուխտավայրեր (Արցախ-Ղարաբաղի, Լոռի-Գուգարքի, Շիրակի դաշտի, Արարատյան դաշտի, Նախիջևանի, Ատրպատականի. Վասպուրականի և այլն)։ Համահայկական ուխտավայրեր՝ Էջմիածին, Խոր Վիրապ, Մշո Սուրբ Կարապետ, Գեղարդ, մասամբ Սևան և այլն։

Հատուկ պատասխան է պահանջում այն տարօրինակ երևույթը, որ, օրինակ, Արարատյան դաշտի և Կոտայքի բազմաթիվ վանքերի առկայության պարագայում, Երևանի արվարձան Նորքի շատ անշուք Սուրբ Աստվածածին եկեղեցին ավելի շատ ուխտավոր էր ունենում, քան այդ վանքերը։ Սևանի ավաղանի, Վայոց Ձորի, Նախիջևանի, Սիսիանի և այլ մոտակա վայրերի բազմաթիվ հռչակավոր վանքերի առկայությամբ նույն Վայոց Ձորի Արկազու Սուրբ Խաչ անշուք վանքը հեռավոր վայրերից ավելի շատ ուխտավորներ էր հավաքում իր շուրջը, քան տասնյակ վանքեր։ Նման զորությամբ օժտված էին Արարատյան դաշտում Արայի լեռան հռչակավոր ուխտատեղի Ծաղկավանը, Վարդահերի վանքը։ Շիրակի դաշտի և Լոռի Փամբակի համար հիշենք նաև Ղալթախչիի բարձունքի Սուրբ Հովհաննես անշուք եկեղեցին և այլ բազմաթիվ օրինակներ։

Այդպիսի նշանավոր ուխտատեղի է համարվել պատմական Հայաստանի արևելյան նահանգների բնակչության համար նաև Միծեռնավանքը։ Գուցե այդ վանքերի անվան, այսինքն, այս կամ սուրբի օրվա հետ կապված երևույթն է պատճառը։ Բայց ի՞նչ ասենք, որ նույն գավառի կամ նահանգի տասնյակ «Սուրբ Գրիգոր», կամ «Աստվածածին» անունը կրող հին եկեղեցիների կամ վանքերի մեջ միայն մեկն է այդ պատվին արժանանում։ Հարցի ճշմարիտ պատասխանը կարող ենք գտնել միայն ավելի խոր անցյալի՝ հեթանոսական ժամանակների մեջ։

Եթե պատմական տվյալներով հայտնի վանքերը, կառուցված մեհյանների տեղում կամ հին մեհյանները՝ սոսկ փոփոխությունների և վերակառուցումների ենթարկված, չեն պահպանել իրենց հնուց եկող ուխտավայրի նշանակությունը, ապա պետք է բացատրել նրանով, որ այդ գավառի բնակչության սովորույթների հաջորդականության թելը կտրվել է բնիկների գաղթերով, վերաբնակեցում կատարվելով նորեկներով, կամ պարզապես իրենց ժամանակին իսկ այդ մեհյանները խիստ տեղական՝ տվյալ բնակավայրի պաշտամունքի վայր են եղել և ոչ լայն շրջանակի։ Կամ թե, պարզապես, նոր կրոնի՝ քրիստոնեության հոգևոր դասին հաջողվել է այդ պաշտամունքը բռնությամբ արգելել կամ քարոզով մոռացնել, մանավանդ նշանավոր ավաններում և քաղաքներում։ Նման արգելքները, քարոզը, անեծքը, նույնիսկ հալածանքը, ամենայն

հավանականությամբ, շատ քիչ են ազդել մշտաբնակ գյուղացիության վրա, հատկապես կենտրոններից հեռու նահանգներում և լեռնաստաններում։ Այդ էր պատճառը, որ նոր ընդունված կրոնների հայրերը (լինի քրիստոնյա, թե այլ կրոնի), մասնավորապես Հայաստանի նման աշխարհագրորեն տրոհված երկրում, հարկադրված են եղել գրեթե բոլոր հին հեթանոսական ընապաշտամունքների և ծիսակատարությունների օրերը հարմարեցնել քրիստոնեական սրբերի, տոների անվան հետ։

Հայկական Անահիտ աստվածուհու գլխավոր սրբավայրերը, բնական է, պետք է կոչեին Մարիամ Աստվածածնի անունով։ Սրանով պետք է բացատրել, օրինակ, հնագույն վանքերից ու եկեղեցիներից շատերը Աստվածածին անունով կոչելը և Մարիամի մեծ պաշտամունքը։ Երևանի Նորքի Աստվածածնի ուխտավայրի հռչակը հայտնի է հնուց։ Մշո Սուրբ Կարապետի համահայկական ուխտավայրի պահպանած նշանակությունը, որպես հայ հեթանոսական պանթեոնի դպրության և արվեստի աստված Տիրի պաշտամունքի շարունակության, պահպանվեց մինչև 1914—1915 թթ.։ Արայի լեռան ստորոտի Ծաղկավանք ուխտավայրի հռչակը պահպանվեց որպես Արայի պաշտամունքի, որպես գարնան զարթոնքի՝ արևի հարության տոն (այստեղից էլ՝ Ծաղկավանք)։ Գեղարդ-Այրիվանք ուխտավայրը ջրի պաշտամունքի համահայկական վայրերից մեկն էր։ Հիշենք թեկուզ այդ վայրի շրջակայքի քարե հսկա վիշապները, որպես ջրի պաշտամունքի խորհրդանշաններ։ Անտարակույս, այրի խոռոչից բխող աղբյուրն է պաշտվել, որը շարունակվում է ցարդ։ Այդպես էր և «դրընդեղի» (դար անդաղի)՝ գարնան արևի վերածնությունն արտահայտող բազմագան ծեսերով տևական հրավառությունը, որին տրվեց «Տէառնընդառաջ» անունը, իբրև Քրիստոսին 40 օրով տաճարին ընծայելու առթիվ, նրա մուտքին ընդառաջ գնալու պատվին։ Տրդատ I-ի, 1900 տարի առաջ Գառնի հնագույն բերդի մեջ կառուցած հեթանոսական տաճարի պաշտամունքը, ըստ երևույթին, դժվար է եղել վերացնել, որքան էլ «Տրդատա հովանոց» կամ «Տրդատա թախթ», աշխարհիկ կոչումը տային։ Եվ երբ VII դարում, հելլենիստական այդ հոյակապ կանգուն տաճարի ուղղակի արևմտյան պատին կից շինեցին գմբեթավոր մի եկեղեցի (որի հիմքերն են պահպանվել), ապա նոր եկեղեցին կառուցողները ստիպված խնայեցին այդ բացառիկ հեթանոսական կոթողը։ Նման վերաբերմունքը սովորական է նոր կրոնի պայքարի ընթացքում հին ու վերանալիք պաշտամունքների դեմ։

Հայ հեթանոսական, հին և հռչակված այդպիսի ուխտատեղիներից մեկն է եղել նաև Ծիծեռնավանքը, հետագայում վերակառուցված որպես հնագույն հայ քրիստոնեական բազիլիկ տաճար, սակայն պահպանած իր հեթանոս անունը։ Այս հին անվանը (նույնպես քրիստոնեական բովանդակություն տալու միտումով, կամ հեթանոսական գաղափարը մոռացած լինելու և տրամաբանական չհամարելու պատճառով) տվել են մի շատ պարզունակ բացատրություն՝ որովհետև հին հայերենում «ծիծեռն» բառը նշանակում է նաև ճկույթ, Ծիծեռնավանքն էլ բացատրեցին «ճկույթի վանք», ընդ որում նվիրված Պետրոս Առաքյալի ճկույթին։ Սակայն այդ մասունքի Հայաստան հասնելը միանգամայն անհնարին էր և պատահական չէ, որ Սյունիքի արքեպիսկոպոս, իշխանազուն Ստեփանոս Օրբելյան պատմիչն իսկ չի հիշատակում հույժ քրիստոնեական այս ավանդությունը, երբ խոսում է մեղ զբաղեցնող վանքի մասին։

Մինչդեռ շատ այլ վանքերի շուրջը հյուսված ավանդությունները մեջ է բերում առանց վերապահության (Թանահատ, Որոտան, Կնեվանք և այլն)։

Հայ հեթանոսական իրականության մեջ թռչուններից ծիծեռնակը, որպես պաշտամունք, առաջնակարգ տեղերից մեկն է գրավել և դրա վերապրուկը պահպանվել է Հայաստանի բոլոր նահանգներում, գավառներում՝ աղգագրական նյութերի մեջ (Այրարատ, Սյունիք, Գուգարք, Արցախ, Վասպուրական)։

Երվանդ Լալայանը Գանձակի գավառի աղգագրական նյութերի շարքում բերելով կենդանիների պաշտամունքի օրինակներ, սկսում է թռչուններից և առաջինը՝ ծիծեռնակից. «Ինչպես Վարանդայում, այնպես էլ Գանձակի գավառում թռչունների պաշտամունքը մասամբ մնացել է։ Մի քանի թռչուններ սուրբ են համարվում, ժողովուրդը նրանց մեղք է համարում սպանել, նրանց քար չի նդում, նրանց բները չի քանդում։ Այսպիսի թռչուններից նշանավոր է ծիծեռնակը. սրան ոչ միայն մի որևէ վնաս չեն հասցնում, այլ և նրանից խնդրում են, որ իրենց երեխաներին շուտ և ճարտար խոսելու շնորհք պարգևի, որովհետև հավատում են, որ նա էլ երբեմն մի ճարտար, քաղցրախոս երեխա է եղել»[6]։

Այս նույն ավանդությանը հանդիպում ենք Լոռի-Գուգարքում և այլուր։ Գանձակի գավառի հայ բնակչության մասին, որի հին ավանդություններից մի բեկոր բերինք վերը, կարելի է ասել ավելին։ Այդ բնակչության մի զգալի մասը 1595—1605 թթ., մասամբ և 1750—1760 թթ. հենց Աղահեճ-Քաշաթաղ գավառից, ուր գտնվում է Ծիծեռնավանքը, և Քաշաթաղի հյուսիսային մասը կազմող Ծար (այժմ Քյալբաջար) գավառից, այլև Քաշաթաղի հարավ-արևմըտյան սահմանը կազմող Ծղուկ-Սիսիանից է գաղթել Գանձակի գավառը։

1893 թ. լույս տեսած «Սիսական» աշխատության մեջ Ղևոնդ Ալիշանը անդրադառնում է նաև Ծիծեռնավանքին։ Նա մեջ է բերում Ստեփանոս Օրբելյանի և Թովմա Վանանդեցու հիշատակումները, նշում ծիծեռնեցի ոմն Աստվածատուրի անունը (XV—XVI դդ.) և մի այլ վայր՝ «դժուարայարկ Ծիծռանքար» կոչված Անասլատ (XIII դար), որը, անտարակույս, 4-րդ Հայքի Պաղին՝ Պաղնատուն գավառին է վերաբերում, որին և հակամետ է մեծ բանասերպատմաբանը[7]։ Այս օրինակները բերում ենք այն նպատակով, որ ցույց տանք, թե Ծիծեռ կամ Ծիծռան անունով այլ կրոնական վայրեր ևս եղել են Հայաստանում։

«Սիսականի» լույս ընծայվելուց հինգ տարի հետո, հայ վաստակավոր աղգագրագետ (և հնագետ) Ե. Լալայանը հրատարակում է «Զանգեզուր» ուսումնասիրությունը, որտեղ գավառի նշանավոր վանքերի մասին իր խոսքն իրավամբ սկսում է Ծիծեռնավանքից, այն նկարագրելով և տալով վանքի լուսանկարը[8]։

Այնուհետև կես դարից ավելի Ծիծեռնավանքը չհիշատակվեց գիտական գրականության մեջ։ Տողերիս հեղինակը ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1947 թ. կազմակերպած գիտաբշավի ընթացքում, պատմական Սյունիքի մի շարք հուշարձանների հետ ուսումնասիրեց նաև Ծիծեռնավանքը (այն չափագրեց արշավախմբի մասնակից, ճարտարապետ Լ. Սադոյանը)։ Տաճարի հա-

6 Ե. Լալայան, Գանձակի գավառ, «Աղգագրական հանդես», Զ գիրք, 1900, էջ 338։
7 Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 267—268։
8 Ե. Լալայան, Զանգեզուր, «Աղգագրական հանդես», Դ գիրք, 1898, № 2, էջ 46—49։

տակագիծը (Լ. Սաղոյան) հետագայում հրատարակեցին Ա. Սահինյանը[9] և իտալացի ճարտարապետ Պաոլո Կունեոն (այդ հուշարձանին նվիրված իր հոդվածում)[10]։ Մեր հաջորդ այցելությունը Միծեռնավանք եղավ 1967 թ.։

Միծեռնավանքի տաճարը, որ բավական լավ է պահպանվել, իր ճարտարապետական առանձնահատկություններով բացառիկ տեղ է գրավում հայ շինարվեստի պատմության մեջ։ Այն գտնվում է երկու ճորակներով շրջապատված, մոտավորապես սեղանաձև հարթ գագաթով բլրակի վրա, վանքի տարածքի հյուսիս-արևելյան մասում։ Տաճարն ունի եռանավ բազիլիկայի հո-



Նկ. 2. Գորիսի շրջանի Խնածախ գյուղից հյուսիս գտնվող Միծեռնավանքի համալիրի, տաճարի և սեղանատան հատակագծերը, դարպասի ճակատը, կտրվածքը և հատակագիծը։

9 Տե՛ս Ա. Սահինյան, Քաջաղի բազիլիկայի հարտարապետությունը, Երևան, 1955։

10 Paolo Cuneo, La basilique de Tsitsernakavank dans le Karabagh, „Revue des Etudes Arméniennes", nouvelle serie, tome V, Paris, 1967.

րինվածք, ընդ որում «արևմտյան» տիպի, որի գլխավոր նավը արտաքուստ շեշտվում է շենքի ծավալում։ Մեզ հասած հայկական մյուս եռանավ բազիլիկաները պատկանում են «արևելյան» տիպին, որի միջին նավը մյուսների հետ գտնվում է ընդհանուր երկթեք ծածկի տակ։ Այս երևույթը կարելի է բացատրել երկրաշարժերի հանդեպ ունեցած զգուշությամբ, թերևս նաև արևմտյան ազդեցությունից և նմանությունից խուսափելու նկատառումով։ Այսպիսով, Ծիծեռնավանքը այն եզակի հուշարձանն է, որն ապացուցում է Հայաստանում «արևմտյան» տիպի բազիլիկաների գոյությունը (ենթադրվում է միայն, որ Ծրերույքը և Դվինի կաթողիկեն V դարում նույնպես այդ հորինվածքն են ունեցել)։

Ծիծեռնավանքում առաջին հերթին աչքի է ղարնում տաճարը երկու տարբեր շինանյութով կառուցած լինելը։ Պատերի ստորին մասը ամբողջ պարագծով, յոթ-ութ շարք բարձրությամբ, կառուցված է մուգ գորշավուն բազալտի սրբատաշ խոշոր քարերից, իսկ մնացածը՝ բաց դեղնավուն ֆելզիտի մաքուր տաշած քարերից։ Ընդ որում ոչ միայն պատերի վերին մասերը, այլև աբսիդը ավանդատներով, մույթերը և որմնամույթերը, տաճարի բազալտե մասի համեմատությամբ, հետագա հավելված են։ Տաճարն ունի արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն հատակագիծ (արտաքին չափերն են 12,5×25,6 մ)։ Ներսի տարածությունը երկու շարք մույթերով բաժանվում է երեք նավի, որոնցից գլխավորը (միջինը) կողայիններից լայն է ավելի քան երկու անգամ։ Այստեղ ուշագրավ է մույթերի ձևը՝ նրանք ուղղանկյուն են (հյուսիսային շարք) և քառակուսի (հարավային շարք)։ Հայաստանի մյուս եռանավ բազիլիկաների մույթերը ունեն Т-աձև կտրվածք (միայն Աղցի IV դարի բազիլիկայի մույթերն են քառակուսի)։ Ծիծեռնավանքում մույթերի չափերի անհավասարությունը երկայնական ուղղությամբ բերել է նրանց միջև ձգվող պայտաձև և երկկենտրոն կամարների թռիչքների անհավասարություն[11]։ Միջին նավն արևելքում ավարտվում է արտակարգ շեշտված պայտաձև հատակագիծ և հաղթակամար ունեցող խորանով։ Այն լուսամուտ չունի, ինչպես IV—V դդ. հայկական հուշարձաններից Ճարճակեսը, Թանահատը։ Խորանի երկու կողմերում կան սեղանաձև հատակագծով թաղածածկ ավանդատներ, որոնք աբսիդի հետ ներառված են տաճարի ընդհանուր ծավալի ուղղանկյուն եզրագծի մեջ և դրսում չեն արտահայտվում։ Ավանդատները երկհարկանի են, ընդ որում երկու հարկերն էլ տաճարի արևելյան ճակատում լուսամուտներ ունեն։

Ծիծեռնավանքի ներքին տարածության կազմակերպումն ունի մի բացառիկ հետաքրքրական առանձնահատկություն՝ դա խորանի վրա գտնվող պատշգամբն է, որը կամարակապ երեք բացվածքներով դուրս է գալիս դեպի գլխավոր նավը։ Այդ վերնահարկը, որի հատակը գտնվում է ավանդատների երկրորդ հարկերի հատակների հետ միևնույն բարձրության վրա, լուսավորվում է տաճարի արևելյան ճակատում բացվող զույգ լուսամուտներով և նրանցից բարձր տեղադրված՝ կիսաշրջանաձև պատուհանով։ Վերնահարկի կամարները պայտաձև են։ Նրանց միջի սյուները ունեն պարզունակ խոյակներ և խարիսխներ։

---

11 Ծիծեռնավանքի երկկենտրոն կամարները, ինչպես և Ճարճակեսի (Ջարչաոիսի) միանավ եկեղեցու սլաքաձև որմնակամարը Հայաստանում այդ ձևի կամարի վաղագույն օրինակներն են։

Միծեռնավանքի վերնահարկը գործառնական նշանակություն չունի, որովհետև չկան դեպի այն տանող մշտական աստիճաններ։ Միակ հնարավոր մուտքը հարավային ավանդատան թաղի մեջ թողնված անցքն է, որտեղից կարելի է բարձրանալ ավանդատան երկրորդ հարկը և այնտեղից անցնել կամարասրահով այդ պատշգամբը։ Միծեռնավանքի վերնահարկը հիմնականում ունի գեղագիտական նշանակություն՝ տաճարի գլխավոր նավի ձևավորման գործում (որպես լույսի աղբյուր այն երկրորդական դեր է խաղում)։ Կարելի է ենթադրել, որ կամարների միջև կանգնեցված են եղել ազատ թևերով քարե խաչեր, որոնք կամարակապ բացվածքների լուսավոր ֆոնի վրա երևացել են իրենց ուրվանկարով (նման տպավորիչ ձևավորում ունեցել է Սյունիքի մի այլ հնագույն կոթող՝ Աղուդիի VI դարի մահարձանի եռակամար բացվածքով վերին մասը, որի խաչերի բեկորները տեղափոխվել են Սիսիանի տաճար)։

Միծեռնավանքի այս վերնահարկը լույս է սփռում հայ ճարտարապետության գլուխ գործոց Զվարթնոցի վերակազմության վեճի առիթ ծառայող մի խնդրի վրա։ Զվարթնոցում վերնահարկի գոյության փաստի ընդդիմախոսների հիմնական փաստարկներից մեկը տաճարում դեպի երկրորդ հարկ տանող աստիճանների բացակայությունն է։ Միաժամանակ նշվում է, որ սյունասրահ վերնահարկերը խորթ են հայ ճարտարապետությանը և վաղ միջնադարի հայկական եկեղեցիներում չեն հանդիպում։ Միծեռնավանքի օրինակը գալիս է ժխտելու այդ փաստարկները[12]։ Սակայն Հայաստանում մենք ունենք վերնահարկ ունեցող եկեղեցու մի այլ օրինակ ևս, այն էլ V դարից. դա Գյուտ կաթողիկոսի կառուցած Սրկղոնքի տաճարն է, որի հորինվածքի մասին պահպանվել է Ստեփանոս Օրբելյանի մանրամասն նկարագրությունը։ Պատմիչը գրում է. «...հիմնարկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի Գիւտոյ երանելւոյ՝ Հայոց կաթողիկոսի ...Ե։ կատարեալ զնա մեծածախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշաքարտուր շինուածովք երկայմբէթս և եռախորանս. և յերկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք շինեալ»[13]։

Ըստ հայոց կաթողիկոսների ժամանակագրության, որ տվել է Օրմանյանը, Գյուտի գահակալման ինն երորդ տարին ստացվում է 470 թ.[14]։ Շնորհիվ Օրբելյանի չափազանց արժեքավոր այս տեղեկությունների, հայտնի է դառնում, որ արդեն 470 թ. Հայաստանում եղել է գմբեթավոր եկեղեցի (նույնիսկ երկգմբեթ)՝ զավիթով, արտաքին սրահներով (ինչպես, օրինակ, Երևրույքը) և, մեզ համար տվյալ դեպքում կարևոր, սյունաղարդ վերնատնով[15]։ Պետք է ավելացնել, որ մասնագետների կողմից դեռ ըստ արժանվույն չգնահատված Սրկղոնքի այս բացառիկ տաճարը անպատճառ անհրաժեշտ է նկատի ունենալ՝ վաղ միջնադարի հայ ճարտարապետության ձևաստեղծման և գմբեթավորման խնդիրները ուսումնասիրելիս։

---

12 Բացառությամբ Ամաղու Նորավանքի, դեռևս դեպի երկրորդ հարկ տանող մնայուն քարե աստիճաններ չունեն նաև Հայաստանի միջնադարյան երկհարկ եկեղեցիները (Կապուտան, Գոշավանք, Կարբի, Եղվարդ, Ս. Հովհաննես Կարապետ)։

13 Ստեփաննոս Օրբելյան, էջ 71։

14 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Դ, Բեյրութ, 1961։

15 Երկգմբեթ եկեղեցու ավելի ուշ ժամանակաշրջանի օրինակ հանդիպում է Վրաստանում (Գուրջահանի), որը նման է Սրկղոնքի տաճարին նաև սրահի և վերնատան առկայությամբ։

Ծիծեռնավանքի միջին նավը, վերնատնից բացի, լուսավորվում է կողքի նավերի տանիքներից դեպի վեր բարձրացող գլխավոր նավի ընդերկայնական պատերում բացվող պատուհաններով և արևմտյան ճակատի զույգ լուսամուտներով (նման զույգ լուսամուտներ հանդիպում են, օրինակ, Լեռնակերտի միանավ և Աշտարակի եռանավ IV—V դդ. բազիլիկաներում)։ Միջին նավի թաղն ունի շեշտված սլաքաձև կտրվածք։ Այն, ինչպես և տանիքի քարե սալերը, հավանաբար IX—X դդ. վերանորոգման արդյունք են։ Տաճարի նավերի կամարաշարերը, խորանի համեմատությամբ, ավելի ուշ շրջանի գործ են։ Դա պարզ է դառնում խորանի արևմտյան պատի և նրան կից կամարաշարի որմնամույթի ու պատերի վերին հատվածների միջև եղած կապերի զոյությամբ, ինչպես նաև այն փաստով, որ միջին նավի պատերը որոշակիորեն ծածկում են խորանի վերնահարկի եզրային կամարակապ բացվածքները։

Հաջորդ վերակառուցումը, որը տեղի է ունեցել դեռ վաղ միջնադարում, հյուսիսային մույթերի և նրանց միջև ձգվող կամարների ուժեղացումն է լրացուցիչ որմնասյուներով ու կրկնակի կամարներով, ինչպես նաև հյուսիսային պատին կից կամարաշարի կցումով, որի վեց կամարները նստում են քառակուսի հատակագծով որմնասյուների վրա։ Այս բոլորը շինված են սրբատաշ քարով։ Ինչ վերաբերում է հարավային շարքի մույթերի ուժեղացմանը, ապա նրանց կցված լրացուցիչ որմնասյունները շարված են կիսամշակ քարով ու որձաքարով և իրենց բարձրությամբ հասնում են մինչև մույթերի քիվերի տակ։ Այս լրացումն ակնհայտորեն ուշ շրջանի գործ է և տաճարի 1779 թ. նորոգման արդյունք։ Բեմի հատակը մեկ մետր բարձր է աղոթասրահի հատակից։ Դեպի բեմ կարելի է բարձրանալ աբսիդի անկյունների մոտ տեղադրված քարե աստիճաններով։ Միջնադարում է փորված աբսիդի հարավային պատի միջի փոքր խորշը։ Բեմի կենտրոնում բարձրանում է քարե սեղանը՝ կազմված սյան վրա դրված խոշոր սալից։

Ծիծեռնավանքի նավերի թաղերը չունեն թաղակիր կամարներ՝ մի կառուցողական տարր, որը հանդիպում է հայկական մյուս բոլոր եռանավ բազիլիկաներում։ Տաճարի միջին նավերը լուսավորվում են արևմտյան ճակատում, ծածկի անմիջապես տակ տեղադրված մեկական լուսամուտով և ընդերկայնական պատերում բացվող (յուրաքանչյուրում չորսական) բարձր և լայն պատուհաններով։ Բոլոր լուսամուտների կամարները պայտաձև են։ Հետագայում (հավանաբար XVIII դարում) փակվել են հյուսիսային պատի բոլոր լուսամուտները և հարավայինի երկուսը։

Ծիծեռնավանքը ունի չորս մուտք՝ երեքը հարավային պատում, մեկը՝ հյուսիսային։ Նրանցից երեքը, լուսամուտների նման, փակվել են որձաքարով և անմշակ քարերով։ Բաց է միայն մեկ մուտքը՝ հարավ-արևմտյանը, անմիջապես արևմտյան պատին կից։ Մուտքի նիշը բարձր է տաճարի հատակից հինգ աստիճանով։ Մուտքերի ուղղանկյուն բացվածքները գտնվում են տաճարի պատերի հնագույն՝ բազալտե մասում։ Չկան շքամուտքեր, որոնք հանդիպում են Քասաղի, Երերույքի, Տեկորի IV—V դդ. բազիլիկաներում։ Այստեղ միակտուր բազալտե բարավորը նստում է բացվածքի երկու անկյուններում դրված քարե պահունակների վրա։

Ծիծեռնավանքի ճարտարապետության կարևոր առանձնահատկություններից է արևմտյան ճակատում մուտքի բացակայությունը։ Սա եզակի երևույթ է՝ հայկական հնագույն բոլոր բազիլիկաները պարտադիր դուռ ունեն

արևմտյան կողմում։ Ընդ որում, Միծեռնավանքում այդ կողմից մուտք ունենալուն տեղանքը չի խանգարում։

Հուշարձանի հյուսիսային և արևելյան ճակատները անմիջականորեն դրված են բլրի զառիթափ լանջերին, որի հետևանքով հյուսիսից տաճարն ունի բաղմաստիճան որմնախարիսխ, իսկ արևելքից՝ վեց շարք կիսամշակ բաղալ-



Նկ. 3. Միծեռնավանքի տաճարի մուտքերը և արտաքին ճակատների զարդաքանդակները։

տե խոշոր քարերից հիմնապատ։ Շենքի քիվը ստացվում է տանիքի քարե սալերի շարունակությամբ։ Խորանի տանիքի համեմատ միջին նավի երկթեք տանիքը նկատելիորեն ցածր է՝ սա ևս ցույց է տալիս վերջինիս վերակառուցված լինելը։ Այս երկու տանիքների միացման տեղում, միջին նավի տանիքի գագաթին, բարձրանում է վեցսյունանի փոքրիկ զանգակատունը, պսակված կոնաձև վեղարով։ Այն, անշուշտ, կառուցվել է ուշ միջնադարում, որովհետև այսպիսի զանգակատները բնորոշ են Հայաստանի XVII—XVIII դդ. եկեղեցիներին և տարածված են հատկապես Սյունիքում։

Միծեռնավանքի արտաքին ճարտարապետական կերպարը զուսպ է և նույնիսկ խիստ։ Պատերը դրսից ունեն հարդարանքի սակավաթիվ տարրեր։ Հյուսիսային և հարավային ճակատների լուսամուտները ունեն պատի հաստությունից դուրս ելող կիսաշրջանաձև երեսակալներ, որոնք այժմ խիստ հողմնահարված են։ Իսկ արևելյան և արևմտյան ճակատների լուսամուտների պարա-



Նկ. 4. Միծեռնավանքի ինտերիերի հատված։

կաչները ուղղակի փորված են պատի հաստության մեջ։ Արևելյան ճակատի զույգ լուսամուտների տակով գնում է սալերից շարված հորիզոնական քիվ։ Տաճարի պատերի հիմնական զարդաքանդակները վաղ միջնադարին բնորոշ՝ շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչերն են։ Նրանց տարբերակները փորված են հարավային պատի արևմտյան կողմում, լուսամուտների միջև և արևելյան հատվածում, նույն պատի մուտքերի բարավորների վրա։ Իսկ հյուսիսային պատի մուտքի բարավորին շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչը նկարված է կարմիր ներկով։ Ակնհայտ է, որ մուտքերի և պատերի վերին՝ տուֆե մասի վրայի խաչերը քանդակված են միաժամանակ։

Զարդաքանդակներով հարուստ է տաճարի ներսը։ Մույթերի խոյակները զարդարված են ատամիկներով (որոնք դասավորված են հիմնականում մեկ

շարքով, բայց կա և չսխմատաձև, երկշարք դասավորություն), ալիքներով, պարանահյուս քանդակով, ճառագայթներով ութ եռանկյան բաժանված ուղղանկյուններով, սալիկներով և գլանիկներով։ Մույթերի վրա կան վեց թերթիկանի վարդյակներ, ուղղանկյուն շրջանակի մեջ առնված հարթ և լայն ժապավենի օձանման հյուսկեն քանդակ, ութ ճառագայթներով եռանկյունների բաժանված ուղղանկյուններով շրջապատված պարանաձև հյուսվածք։ Մույթերից վերև, նրանց առանցքով, կան երեսակալներ ունեցող ձագարաձև խորշեր, իսկ ավելի վեր, կամարաշարի պատերին քանդակված են հավերժության նշաններ, ինչպես նաև բազմաթերթ վարդյակներ։ Այս բոլոր զարդամոտիվները հատուկ են վաղ միջնադարի հայ արվեստին և կիրառվել են IV—VII դդ.։ Տաճարի այդ մասի ավելի որոշակի թվագրմանը օգնում է քանդակներից մեկը՝ ութ ճառագայթներով բաժանված ուղղանկյունը, որը հանդիպում է միայն V դարի հուշարձաններում (Երերույք, Փարպի), ընդ որում, հատկապես V դարի երկրորդ կեսում (Տեկոր, Ամարաս)։ Ինչ վերաբերում է մույթերի ավելացված մասերին, ապա նրանց և հյուսիսային պատի որմնասյուների (ոչ բոլորի) խոյակները նույնպես մշակված են ատամիկներով։ Հյուսիսային պատին որմնասյունների արանքում պահպանվել է որմնանկարի մի բեկոր՝ ողջ հասակով կանգնած երկու սրբերի պատկերով։ Տաճարի ձևավորման մեջ օգտագործված է նաև գույն՝ կարմիր են ներկված որոշ վարդյակներ և մույթերի խոյակները։

Վանքի համալիրի շենքերից պահպանվել է միայն հարավային պարսպին կից, որձաքարով և կիսամշակ բազալտով շինված, այժմ կիսավեր սեղանատունը։ Այն ուղղանկյուն, ձգված (ներսի չափերն են 13,75×4,25 մ) թաղածածկ կառուցվածք է, որին որպես հարավային պատ ծառայել է պարիսպը (այժմ այդ մասում լրիվ քանդված)։ Մուտքերը երկուսն են՝ արևելյան և արևմտյան պատերում։ Հյուսիսային կողմից դեպի սեղանատուն բացվում են կամարակապ խորշեր։ Սեղանատունը XVIII դարի գործ է, որովհետև որպես արևելյան մուտքի բարավոր XVII դարի խաչքար է օգտագործված։ Վանքի խցերի հետքերը նշմարվում են համալիրի արևմտյան կողմում։ Պարիսպը շինված է որձաքարով և գետաքարով, կրաշաղախի միջոցով։ Այն նախնականը չէ և XVII դարի վերակառուցման արդյունք է։ Սրբատաշ բազալտից շինված այժմյան դարպասի շքամուտքի շուրջը, պատի շարվածքի մեջ, պահպանվել են նախնական դարպասի կամարի հատվածները, շարված նույն ֆելզիտի սրբատաշ քարերով, որով և կառուցված է տաճարը։ Հին դարպասի կամարը ունեցել է համեմատաբար ավելի մեծ թռիչք (3, 55 մ)։ Նոր դարպասը ուղղանկյուն բացվածք է, վերևում համակենտրոն կրկնակի կամարներով, կառուցված, ըստ արձանագրության, 1613 թ.։

Տիեզերավանքը որոշ հնագույն հայկական տաճարների նման, շատ աղքատ է վիմագրություններից։ Չկա, և անտարակույս իսպառ չի եղել, շինարարական արձանագրություն։ Կարելի է համոզված ասել, որ մինչև VI դարի կեսերը Հայաստանում ընդհանրապես տարածված չի եղել կրոնական մեծ ու փոքր կառույցների վրա դրավոր հիշատակարաններ թողնելը։ Այդ, անշուշտ, օրենքով արգելված չէր, որովհետև ունենք հակառակ փաստեր, ինչպես Տեկորի տաճարի օրինակը (V դարի վերջ)։ Սակայն որպես սովորություն այդ շարունակվել է 2—3 դար և, հավանաբար, ըստ վաղ քրիստոնեական շրջանում իշխող

հոգեբանության ու գաղափարների, համարվել է անհամեստություն, անվայել ցուցամոլություն, մինչև իսկ հասնելով մեղքի հասկացողության։

Ներսից և մանավանդ դրսից արձանագրությունների մեծ հնարավորություններ ունեն Միծեռնավանքի որմերը, իրենց ընդարձակ հարթ մակերեսների, քարի ընտիր և կայուն տեսակի շնորհիվ։ Արձանագրություն չունենալու փաստը ևս, ինքնին, ցույց է տալիս տաճարի խոր հնությունը, ինչպես և այն, որ վաղ միջնադարից հետո Միծեռնավանքը էական վերակառուցման չի ենթարկվել, որը, անշուշտ, պատճառ կդառնար գրավոր հիշատակ թողնելու համար։ Ավելին, վանքի պատերը, մինչև XVI դարի երկրորդ կեսը, գուրկ են նվիրատվական, ավելի ճիշտ՝ հիշատակ-արձանագրություններից, որոնցով այնքան հարուստ են շատ այլ վանքեր։ Այս էլ թերևս կարելի է բացատրել երկու պատճառով։ Նախ՝ ինչպես երևում է, Միծեռնավանքը այն բացառիկ վանական հաստատություններից է, որ անշարժ գույքի մեծ սեփականատեր չի եղել, հողեր ու գյուղեր չի ունեցել, ուստի և նվիրատվություններ չի ստացել, որոնք առանց վիմագիր արձանագրության գրեթե չէին լինի։ Երևի չի ունեցել նաև վանականների բազմաքանակ կազմ, որը նկատելի է և խուցերի փոքր թվից։ Երկրորդ՝ ըստ երևույթին Միծեռնավանքը ոչ թե կրոնական-վարչական կենտրոն, այլ սոսկ մեծ ուխտատեղի է եղել, որպիսին և մնացել է բազում դարեր։

Ըստ գրության ձևի տաճարի հնագույն արձանագրությունը ներսում՝ հյուսիս-արևելյան մույթին հանգչող կամարի ստորին քարերի վրայի հետևյալ երեք բառերն են.

ՏԱՐ
ՈՐՅ ՁԳՐ
ԻՇԵ ՈՐԳ
ՅԵՔ ԳՍ

(Տաւոր յիշեցեք զԳիորգս).

«Տաւոր»-ը պետք է կարդալ՝ «ուխտավոր», բայց որևէ հիմք չկա հավաստելու, թե արձանագրությունը պակաս է քար ընկած կամ այդ քարը այլ տեղից բերուած, հարմարեցրած լինելու պատճառով։ Ըստ որում, մույթից ձգվող այդ կրկնակի կամարը հետագա հավելում է, ամենից վաղ՝ VI դարի վերջերի։

Հին արձանագրություն է նաև դրսից՝ հարավային ճակատի 3-րդ (արևելյան) մուտքի աջ կողմին քանդակածը.

ՈՎ ՏՐ ՔՍ Ա
ՁԱՏ ԵՂԲ
ԱՅՐ ՍԻՐՈՂ
ԶԳՐԻԳՈ ՁԱՆԱՐԺԱՆ
ԾԱՌԱՅՍ ՅԻՇԵՑԷՔ... ԹՍ

(Ով Տեր Քրիստոս Ազատ եղբայր սիրող զԳրիգո[ր] զանարժան ծառայս յիշեցէք [յաղո]թս)։

Վերջապես, նույն դարերին են պատկանում նաև հարավային պատի արևի երկու ժամացույցների 12 թվերն արտահայտող տառերը։ Միայն տարօրինակ է (ու եզակի), որ Ժ(10) տառից հետո պետք է գրվեր ԺԱ (11) և ԺԲ (12), ինչպես ընդունված էր ամենուրեք, սակայն գրել են Ի (20) և Լ (30), այսինքն, ինչպես այբուբենի հաջորդականությունը։ Դժվար է ենթադրել, թե ժամացույց ունենալու առաջին փորձերն են եղել և կարգը չեն իմացել։ Ավելի հավանական է (ինչպես երևում է ժամացույցների անշուք լինելուց), որ փորագրողը պար-

զապիս այդ գործի համար բավարար դրագետ մարդ չի եղել։ Կապույտ գույնի քարի վրա փորված երկրորդ ժամացույցի Ը (8) տառը և Ի (20, բայց այստեղ 12-ի փոխարեն կամ համարժեքով) տառի պոչը ստեղծված են խաչի թեվերով։ Այս երկու տուտէրը գծված են բարձր արվեստով և դրանցից առաջ, Ժ տառից հետո կլոր մի օղակ է գծված, վերևից ուղղահայաց գծով պսակված (խնձորի նման)։

Առաջին ժամացույցը, ավելի շնորհալի ձեռքով գծված, գտնվում է հարավային ճակատի դեպի արևելք հաշված 3-րդ լուսամուտի տակ, աջ կողմից երկրորդ քարի վրա։ Այստեղ միայն Ի (20=11) տառին հաջորդում է անավարտ և անսովոր Բ, առանց մեջտեղի գծիկի (Թ)։ Այսինքն վարպետի համար պարզ չի եղել, թե Ժ (10) տառից հետո ի՞նչ պետք է գրել՝ 11 և 12 թվերի համար։

Ուշ միջնադարյան այս ժամացույցի տակ գրված է.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՏՐ ԱՋՐԻՆ ՀՔՅՆ

իսկ քիչ վերև, աջ կողմից, անփույթ (այժմ տեղ-տեղ եղծված) գրված է.

ՍԲ ԲԱ... ԽՍ ՏՐ ՄԽԹՐՉԻՐԻՆ ՆՍ ՄԱԻՐՍ

որը կարելի է վերծանել՝ «Սուրբ բարեխոս խաչս Տեր Մխիթար հայրին (՞) և մորս» (ԵՍ-ը կարդալով Ե։)

Երկրորդ ժամացույցը պատկերող այս նույն կապույտ քարի վրա էլ կա նույնպես մի փոքրիկ արձանագրություն, որը առաջինն է իր թվագրությամբ.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՍ ՈՒՀԱՆԵՍԻՆ ԹՎ ՌԼ (1581)

Այս նույն ժամանակաշրջանի պետք է համարել տաճարի ներսի արձանագրություններից մեկը ևս։ Գտնվում է բեմի ձախ կողմից փորված երկու պատրհանները (խորշեր) անջատող քարի վրա։ Այդ ոչ մեծ քարի վրա փորված է վեց խաչ (երկուսը փոքր) և հետևյալ գրությունը.

ԵՍ ՄՀՈՏԻԿ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՀԱԻՐ ԻՄ
ՄԽԻԹԱՐ ԱԹԱՐԲԷԿԻՆ

Վերապահությամբ այս արձանագրությունը համարում ենք XV դարին պատկանող ոչ միայն տառաձևերի, այլև այն պատճառով, որ այդ հազվագյուտ անունը՝ «Մահուտ», մեկ անգամ հանդիպում է միայն XV դարում[16]։

Հյուսիսային երկրորդ մույթի վրա կա.

ԵՍ ՀՆՁԱՆԴ
ԿՆԿԵՑԻ ՍԲ ՆՇ

Հարավային պատի առաջին մուտքի ճակատաքարից վեր երրորդ շարքի անկյունից առաջին և երկրորդ քարերի վրա 1606 թ. փորված են երկու հյուսվեն խաչեր ի հիշատակ ոմն Տեր Մկրտչի.

ԽԱՉՍ
ՏՐ ՄԿԻՐՏ ԹՎ ՌՊԵ
ԻՉԻՆ

16 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1946, էջ 171։

Նրանց մոտ, նույն ժամանակի խաչերի միջև է հաջորդ, մաշված, դժվարընթեռնելի հիշատակը.

... ՈՃ ...
ՊՈՒՏԱԽ

«Բուդաղ» անվան արևմտահայերեն տառաձայնությունը՝ «Պուտախը»՝ հանդիպում է XVI դարի առաջին կեսին[17]։

Ապա դալիս են, անշուշտ նույն XVI դարի, հողմնահարված մանր հիշատակարաններ, միայն թվերի կեսը կամ «ես»-երը մնացած, հաղիվ ընթեռնելի բառերով ու տառերով. ինչպես օրինակ՝ ...ԴՈՒՐՆԱՄ ԱՏԱՄՆ... (կամ դուխնամ)։ Երկրորդ վերջին մուտքից վերև, երկրորդ շարքի վրա՝ ԹՎ ՌԾԵ (1606). քիչ վերը, սրան մոտիկ՝ ԹՎ Ռ... ԳԻՐԵՑԻ։ Նույն մուտքի ճակատաքարից վեր երրորդ շարքի վրա (աջ կողմից)՝

ՍԲ ԽՍՉՍ ԻԱՐԵԽՈՍ ՏՐ ՆԵՍՍԻՆ ՀԲՅՆ

Տաճարի հարավային ճակատի արևմուտքից առաջին, միակ բաց մուտքի բարավորից վերև, բազալտի շարվածքի մեջ հատուկ ադուցված տուֆ քարի վրա կա Միծեռնավանքի՝ դրականության մեջ հայտնի միակ արձանագրությունը, որի առաջին երեք տողը և թվականը հրատարակել է Ե. Լալայանը (սակայն «տաճար»-ը կարդալով «գավիթ»)[18]։ Արձանագրությունը հետևյալն է (մեր վերջին այցելության ժամանակ այն այլևս չկար տեղում).

ՆՈՐՈԳԵՑԱԻ ԴԱՃԻՍ
ԵՒ ՍԲ ՋԱՆԿԱԴՈՒՆՍ
Ի ԺԱՄԱՆԿՆ ԻԲՐԱՀԻՄ
ԽԱՆԻՆ ՁԵՌՆԲՆ
ԱՒՌՈՒՔԻ ՈՐԴԻ ՆԱՁԱ
ԳՈՒԼԻՆ ԽՆԱԾՈՐԿՑԻ
ԵՒ ԷՐ ՎԱՔԻԼ ԳՈՐ
ԾՅՍ ՈՒԴԻ ՅՈՒՀԱՆՆ
ԹՆ ՌՄԻԷՆ (1779)

Միծեռնավանքի XVIII դարի այս նորոգումը վերաբերում է, մեր կարծիքով տանիքի փոքրիկ զանգակատնից բացի, տաճարի դռների և լուսամուտների մեծ մասը փակելուն և հարավային մույթերը ուժեղացնելուն, որովհետև հուշարձանը այդ ժամանակաշրջանի վերանորոգման այլ նշաններ չունի։

Նորոգման վերաբերող մի այլ արձանագրություն կա Միծեռնավանքի համալիրի միակ՝ արևմտյան դարպասի դրսի պատին, կամարակապ բացվածքից ձախ և քիչ վերև.

ՆՈՐՈԳ
ԵՑԱԻ ՊԱՐԻՍՊՍ Ի ՁԵՌՆ ՀԱՅ
ԿԱՋ ԻՇԽԱՆԻՍ Ի ԱՌՋՆԴՈՒ
ԹԻ ՄԿՏՋ ԵՊՍ ԹՎ ՌԿԲ (1613)

Միծեռնավանքի սեղանատան արևելյան դռան վրա որպես բարավոր օգտագործված խաչքարի դեպի շինության ներսը նայող երեսին կա հետևյալ արձանագրությունը.

---

17 Նույն տեղում, հատ. Ա, Երևան, 1942, էջ 418—419։
18 Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 48։

ՍԲ ԽԱՉՍ ԳՈՒՋՈՒՆ
...ՔՍ Թ ՌՍԴ (1605)

Ծիծեռնավանքում չկան կառուցող վարպետների նշաններ։ Ինչպես հնագույն՝ պատերի բաղալտե ստորին մասի, այնպես էլ վերին՝ տուֆե մասերի, մույթերի վրա բացակայում են վաղ միջնադարի հայկական հուշարձաններում հաճախ հանդիպող այդ նշանները՝ երկրաչափական պատկերների կամ հայկական այբուբենի տառերի ձևով։ Վարպետների նշանների բացակայությունը նույնպես վկայում է տաճարի խոր հնության մասին, որովհետև Հայաստանում նրանք տարածում գտան VI դարից։ Եվ հատկանշական է, որ Ծիծեռնավանքում հանդիպող շինարար վարպետների երեք նշանները փորված են հետագայում ավելացված որմնասյուների վրա։ Դրանք ունեն հետևյալ պատկերը՝



Սրանցով սպառվում են այս հին, եղակի, խստաշունչ ճարտարապետական կոթողի վիմական գրությունները։

Ինչպես տեսանք, Ծիծեռնավանքի արձանագրությունները չեն վերաբերում տաճարի կառուցմանը։ Նրա կառուցման կամ հիմնական վերակառուցումների ժամանակաշրջանը կարելի է որոշել (իհարկե, որոշ վերապահումներով) տաճարի ճարտարապետական-գեղարվեստական առանձնահատկություններից ելնելով։ Հուշարձանի նկարագրության ընթացքում նշվեց, որ այն ունեցել է շինարարական չորս հիմնական փուլ։ Առաջինը արտաքին պատերի ստորին՝ բաղալտե մասի կառուցումն է, երկրորդը՝ պատերի վերին՝ ֆելզիտային տուֆից շարված մասի, վերնահարկով խորանի և ավանդատների հավելումն է, երրորդը՝ նավերը բաժանող կամարաշարի կառուցումը և տաճարը թաղով ծածկելը, չորրորդը՝ մույթերի ուժեղացումն է և կրկնակի կամարների ու հյուսիսային պատին կից որմնակամարաշարի ավելացումը։

Հարդարանքի տարրերի ոճական առանձնահատկությունները, ինչպես տեսանք, թույլ են տալիս երրորդ փուլը թվագրել V դարի երկրորդ կեսով, իսկ չորրորդը՝ VI—VII դդ.։ Ինչ վերաբերում է խորանի և նրա կողքի երկու սենյակների հավելմանը (երկրորդ փուլ), ապա դա կարող էր տեղի ունենալ դեռ IV դարի վերջին և V-ի սկզբին երբ կաթողիկոս Սահակ Պարթևի (387—436 թթ.) կանոնների համաձայն պահանջվում էր, որ ամառը բահանան եկեղեցում բնակվեր[19]։ Այդ ժամանակաշրջանում հուշարձանն ունեցել է փայտե ծածկ և եթե նկատի ունենանք տաճարի զգալի լայնությունը, ապա այն արդեն եռանավ բազիլիկա է եղել, միայն նավերը բաժանվել են փայտե սյունաշարերով։

Ամենակարևորը, սակայն, տաճարի հիմնադրման ժամանակաշրջանի պարզումն է, սկզբնական՝ ուղղանկյուն, արևելքում առանց խորանի բաղալտե մասի թվագրումը։ Իհարկե, առկա նյութը բավարար չէ Ծիծեռնավանքի հիմնադրման ժամանակն անվերապահորեն որոշելու համար։ Սակայն նրա անվան հնթանոսական ծագումը, ճարտարապետության մի քանի կարևոր առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեության

19 «Կանոնագիրք հայոց», հատ. 1, Երևան, 1964, էջ 377։

տարածման ժամանակ եկեղեցաշինության մասին պատմիչների որոշ տեղեկությունները թույլ են տալիս բավականին հավանական վարկած առաջադրելու. մեր կարծիքով, Միծեռնավանքի հնագույն կառուցվածքը եղել է հեթանոսական տաճար՝ Սյունիքում քրիստոնեությունը մուտք գործելուց հետո եկեղեցու վերափոխված։



Նկ. 5. Միծեռնավանքի տաճարի ընդլայնական կտրվածքը և շինարարական փուլերը. 1) Տաճարի հատակագիծը III դ., 2) IV դ. վերջում, 3) V դ. երկրորդ կեսում, 4) VI դ.։

Ի՞նչն է հիմք ծառայում այս ենթադրության համար։

Հայաստանը աշխարհում առաջին և քառորդ դար միակ քրիստոնեական պետությունը լինելու պատճառով պետք էր IV դարի հենց սկզբից նոր պաշտամունքի համար եկեղեցական շենքերի միանգամայն ինքնուրույն տիպեր մշակեր։ Քրիստոնեության տարածումից հետո առաջին տասնամյակների ընթացքում Հայաստանում եկեղեցիների բուռն շինարարություն էր ծավալվել։ Ըստ պատմիչների վկայությունների[20] և հայ ճարտարապետության պատմության մեծ հրախտավոր Թ. Թորամանյանի, ինչպես և Ա. Սահինյանի համոզիչ եզրակացությունների[21] 301 թ. սկսած Հայաստանի հեթանոսական մեհյանների մի զգալի մասը գրեթե անփոփոխ, կամ մասնակիորեն վերակառուցվելով. օգտագործվեց որպես եկեղեցի, իսկ մի այլ մասն էլ ավերվեց և նրանց հիմքերի վրա եկեղեցիներ կանգնեցվեցին։ Այդ վերակառուցումների ընթացքում կրկնվում էր հեթանոսական շենքի երկայնական, արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն հորինվածքը, միայն բեմը՝ «սեղանը», արևմուտքից տեղափոխվում էր արևելք[22]։

20 Տե՛ս «Ագաթանգեղայ պատմութիւն», Թիֆլիս, 1382։ Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883։ Զենոբ Գլակ, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889։

21 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 1, 1942։ Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955։

22 Ա. Սահինյան, նշվ. աշխ., էջ 231։

Եվ ահա Ծիծեռնավանքը, իր հնագույն՝ բազալտե մասով, այս ձևափոխման ամենահավանական օրինակն է, որը հաստատվում է նաև նրա ճարտարապետության եզակի առանձնահատկությամբ՝ արևմտյան կողմից մուտքի բացակայությամբ։ Իսկ դա, ինչպես տեսանք, հետևանք է հեթանոսական շրջանում արևմտյան կողմում զոհասեղանի գոյության։ Ծիծեռնավանքն էլ քրիստոնեության տարածման ժամանակ ավերվել է մինչև պատերի ստորին մասը։ Կամ գուցե, որն ավելի է հնարավոր, սկսել է կառուցվել որպես մեհյան, բայց շինարարությունն ընդհատվել է Սյունիքում քրիստոնեության մուտքից հետո։ Սակայն հարց է ծագում, թե Հայաստանում որպես հեթանոսական տաճարներ կարո՞ղ էին լինել իսկական բազիլիկ շենքեր (Ծիծեռնավանքի նախաքրիստոնեական կառուցվածքն իր ղգալի լայնությամբ և համաչափություններով կարող էր միայն բազիլիկա լինել)։ Այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ, թեպետ Հայաստանում վաղ միջնադարում նոանավ բազիլիկաների տարածված լինելը գուցե որոշ չափով նաև արևմուտքի ազդեցության արգասիք էր։ Ինչ վերաբերում է Հայաստանում հեթանոսական տաճարի պահպանված միակ օրինակին՝ Գառնիին, ապա անհրաժեշտ է նշել, որ հունահռոմեական պերիպտերը չէ, որ բնորոշում է հայկական նախաքրիստոնեական պաշտամունքային կառուցվածքների հորինվածքը։ Դեռ մինչև հելլենիզմը Հայաստանում կային պաշտամունքային զարգացած ճարտարապետություն և տաճարների սեփական տիպեր (թե՛ բազիլիկ և թե՛, որը շատ հավանական է, նաև կենտրոնակազմ), որոնք կիրառվել են ընդհուպ մինչև քրիստոնեության ընդունումը։ Նրանց հորինվածքներն ունեցել են տեղական ակունքներ։ Հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրողների մի մասն այն կարծիքի է, որ եկեղեցիների բազիլիկ տիպը Հայաստան ներմուծվեց հարևան Սիրիայից։ Այս տեսակետը հիմնված է III—IV դդ. Հայաստանի ու Սիրիայի մշակութային-կրոնական սերտ կապերի փաստի, ինչպես և այդ երկու երկրների ճարտարապետական որոշ ձևերի ու դեկորատիվ արվեստի տարրերի նմանության վրա։ Սակայն բազիլիկ կառուցվածքները Հայաստանի տարածքում հայտնի էին քրիստոնեության ընդունումից դեռ հազար տարի առաջ։ Ուրարտական քաղաքների միջնաբերդերի ընդունելության դահլիճները իսկական բազիլիկաներ են՝ ուղղանկյուն հատակագծով և սյունաշարերով նավերի բաժանված։ Այսպես է, օրինակ, Արգիշտիխինիլի-Արմավիրի քարաշեն մոնումենտալ դահլիճը, որն ունի մոտավորապես արևելքից արևմուտք ձգված, հայկական բազիլիկաներին բնորոշ համաչափություններով հատակագիծ՝ երկու շարք փայտե սյուներով երեք նավի բաժանված։ Հատկանշական է, որ Ուրարտուի անկումից հետո Արմավիրը դարձավ Հայաստանի առաջին մայրաքաղաքը և հայկական հեթանոսական կրոնի կենտրոնը։ Եվ միանգամայն հավանական է, որ ուրարտական շրջանի բազիլիկ շենքերի հորինվածքը ազդած լիներ Արմավիրի հայկական հեթանոսական տաճարների ճարտարպետության վրա։ Ինչևիցե, Հայաստանում բազիլիկան մինչև մ. թ. IV դարն արդեն ուներ իր զարգացման հազարամյա պատմությունը։ Իսկ Ծիծեռնավանքի տաճարը այդ տիպի կառուցվածքների կարևորագույն և հանգուցային հուշարձաններից մեկն է։

ЦИЦЕРНАВАНК

Член-корр. АН АрмССР М. С. АСРАТЯН

(Резюме)

Цицернаванк занимает важное место в эволюции армянских базилик. Этот памятник, расположенный севернее с. Хнацах Горисского района, имеет несколько строительных периодов. Из первоначальной композиции сооружения сохранились наружные стены из базальта чистой тески высотой около четырех метров, с входами в южном и северном фасадах. Во втором периоде была добавлена алтарная апсида с выраженным подковообразным планом, с двухэтажными приделами по сторонам (апсида и комнаты вписаны в прямоугольник наружных стен). Надконховое помещение, открывающееся тремя арочными проемами в центральный неф, является уникальным в армянской архитектуре. Перекрытие в этот период было деревянным. Третьим этапом является возведение из кремового фельзита чистой тески пилонов, подковообразных арок и верхней части стен храма. Теперь средний неф возвышается над боковыми и дополнительно освещается в верхней части продольных стен. В результате храм имеет базиликальный разрез «западного» типа и является единственным дошедшим до нас памятником этого типа в Армении.

Эти реконструкции имели место не позже второй половины V в., так как декоративные элементы пилонов характерны для армянского искусства V в., а один из орнаментов встречается только в памятниках Армении конца V века (Текор, Амарас, Ереруйк, Парби). К VI—VII вв. относятся усиление пилонов и арок и добавление пилястр к северной стене. Архитектурный анализ, а также косвенные исторические данные обосновывают предположение о том, что Цицернаванк является языческим храмом, переделанным в христианскую базилику.